# ԿՈՉ

Բագուի Հայոց Կուլտ. Միութեան Հրատ. Սեկցիայի Բիւրօն նպատակ ունենալով հայ հասարակութեան լայն խաւերում և գիւղական ազգաբնակութեան շրջաններում տարածել իր հրատարակութիւնները՝ որոշել է առաջիկայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի Համազգային Մեծ Տօնի առիթով դիմել հայ հասարակութեան և խնդրել, հնարաւորութիւն տալ սեկցիային իր հրատարակութիւնների լրիւ կոմպլէկտը ուղարկել հայ գիւղական բոլոր դպրոցներին և տարածել հայ ընտանիքներում։

Որպէս զի իւրաքանչիւր ոք հնարաւորութիւն ունենայ իր լուման մտցնել յօգուտ այդ բարենպատակ գործի, Հրատարակչական Սեկցիան իր հրատարակութիւններից կազմել է չորս սերիա. I, II, III, IV Հանրամատչելի հաւաքածու անուններով.

I Հանրամատչելի հաւաքածուն իր մէջ պարունակում է 22 ր. 50 կ. գրքեր, պատկերներ և մի քարտէզ և արժէ 15 րուբլի։

II Հանրամատչելի հաւաքածուն կազմված է 15 ր. գրքերից, պատկերներից և մի քարտէզից և արժէ 10 րուբլի։

III Հանրամատչելի հաւաքածուն կազմված է միայն գրքերից և պատկերներից 7 ր. 50 կ. արժողութեամբ և արժէ 5 րուբլի։

IV-ը կազմված է 5 րուբլու գրքերից ու պատկերներից և արժէ 3 րուբլի։

Ցանկացողները կարող են դիմել հետեւեալ

# ՅՕԲԵԼԵԱՆ

Հասցէով՝ Баку, Армянскій Культурный Союзъ.

Բիւրոյի նախագահ՝ Ա. Մալխասեանց

Քարտուղար՝ Բ. Մարտիրոսեանց

Բաքու, 20 սեպտ.